

Drevnosty Vostotchnya (Արեւելեան հնութիւններ), Արեւելեան Յանձնաժողովի Երկեր-ի վերջին (1901 թ.) դիրքը բովանդակում է հետեւեալ կարեւոր յոգւածները .

Բարոն Բ. Շտակելբերգի մեծ եւ կարեւոր ուսումնասիրութիւնը, որի խորագիրն է «Իրանական ազգեցութիւնը հին հայերի կրօնական հաւատալիքների վրա» : Հայագէտ Շտակելբերգը այդ ուսումնասիրութեան համար օգտուել է նշանաւոր հայագէտների, արեւելագէտների եւ մեր ու արեւելեան դասական հեղինակների գրուածներից, կարեւոր հատուածներ եւ ծանօթութիւններ մէջ բերելով : Շտակելբերգը սկսում է իւր ուսումնասիրութիւնը հայկական պանթէոնի այն աստուածներից, որոնք իրանական ծագումով ունին . 1) Անահիտ . Անահիտի մասին առաջ բերուած ապացոյցների մեծ մասը Ագաթանգեղոսից եւ Փաւստոս Բիւզանդացու պատմութիւններից են առնուած . 2) Արամազդ . Արամազդի ծագման մասին եղած փաստերը հիմնուած են Ագաթանգեղոսի, Եզնիկի, Darmesteterի Le Zend-Avesta-ի, յունական եւ պարսկական պատմիչների գրուածներէ վրա . 3) Ահրմէր (Հարամանի) — իրանական արասպելաբանութեան չար ոգին . Եզնիկ, Եղիշէ . 4) Միթր (Միհր) = Mithra, Աւեսդա, Բեւեռագիր արձանագրութեանց վրա, Ագաթանգեղոս, Եղիշէ . 5) Սանդարամն . Աստուածաշուշ, Մովսէս Քորենացի, Թովմա Արծրունի . Darmesteter-Avesta . 6) Տիր (Տիւր, ըստ Լազարի՝ Տրէ) . Ագաթանգեղոս : Այդ վեց աստուածների վրա համեմատաբար բարոն Շտակելբերգը համառօտ կերպով է խօսում . առելի մեծ տեղ է գրաւում ապա Վահագնը : 7) Վահագն . Ագաթանգեղոս, Փաւստոս Բիւզանդ, Անանիա Շիրակացի, ապա Մովսէս Քորենացի, որին պ. Շտակելբերգը մեծ հաւատ չէ ընծալում հայագէտների նոր հետազօտութեանց վրա հիմնուած : Այդ բոլորից յետոյ յարգելի հայագէտը խօսում է Զրուան չաստուածոյ մասին, յետեւելով Եզնիկի, Աւեստայի, Եղիշէի վրա : Գլխաւոր աստուածներից յետոյ՝ Շտակելբերգը կանգ է առնում Դեւերի, Յուշկապարիկ, Պարիկ եւ այլ երկրորդական ոգիների ծագման վրա իրանական դիցաբանութեան մէջ, հիմնուելով Եզնիկի, Քորենացու, Փ. Բիւզանդացու եւ այլոց վրա : Շտակելբերգը ապա անցնում է նախնի հայերի երկնային մարմիններին մասին ունեցած հաւատալիքներին . այսպէս՝ Արեւորդիմերին . Անանիա Շիրակացու գրուածքից երկարօրէն առաջ է բերում լուսնի եւ ուրիշ երկնային մարմիններին (աստղերին) ընծայած հաւատալիքներ . ապա առաջ է բերում 18 հայ բառեր, որոնք փոխ են առնուած զլխաւորապէս հին պարսկերէնից եւ նրանց մանրամասն ստուգաբանութիւնն է անում : Երկարօրէն կանգ է առնում Մազդեզանց եւ Զրադաշտի կրօնների պատմութեան վրա եւ նրանց հետքերը փնտռում նախնի հայ հեթանոսական կրօնի մէջ : Գեւեք գերմանացի հայագէտ գիտունը գտնում է որ Զրադաշտի կրօնը հայացեւ, հայկական ձեւեր էր ընդունել, յունական եւ

սեմական կրօնների տարրեր առնելով իր մէջ, որպէս եւ փոքրասիական զանազան կրօնական դաւանանքների մասեր եւս պարունակելով: Այդպէս էր կազմուած, ըստ պ. Գելցերի, Նախնի Հայոց կրօնը. նա մի խառնուրդ էր իրանական, յունական եւ այլ կրօնների տարրերից: Իսկ Բարոն Շտակելբերգը պնդում է, որ Նախնի Հայերի հեթանոսական կրօնի կորիզը կազմում է իրանական (Զրադաշտի) կրօնը, որ խիստ ազդել է նրա վրա:

Գրքին մէջ ուշադրութեան արժանի միւս յօդուածներ եւ ուսումնասիրութիւնները հետեւեալներն են.

Պրօֆ. Ա. Խախանովի (վրացագէտ) «Գալիլայի եւ Դիմնայի վրական բնագիրը». Յարգելի գիտնականը գտել է մի հին ձեռագիր, որ պարունակում է իւր մէջ 16 հեքեաթներ եւ առակներ: Այդ վրացերէն ձեռագիրը՝ մի աւելի հին ձեռագրից է արտագրուած, որ արարական Գալիլա եւ Դիմնա հեքեաթների թարգմանութիւնն է: Պր. Խախանովի գտած ձեռագիրը, որպէս ինքն է ասում, հաւանօրէն 12րդ դարի գործ է: Այդ ձեռագրի մէջ եղած մի քանի հեքեաթները նմանութիւն են արաբական հեքեաթներին, իսկ կան եւ ինֆնուրոյն բուն վրաց հեքեաթներ: Հեքեաթները ամբողջապէս տպագրուած են այստեղ վրացերէն, իսկ մի քանիսի ուսերէն թարգմանութիւնը նոյնպէս տպուած է այս հատորի մէջ:

Արսէն վ. Ղըլըճեանի զեկուցումը Astuhini (Աստախանա) հին քաղաքի մասին: Արսէն վարդ. Ղըլըճեանը նկարագրում է Աստախանան եւ նրա շրջակայքը: Հ. Արսէնը իւր ուսումնասիրութեան մէջ յենվում է գլխաւորապէս Նիկոլսկու «Անդրկովկասի սեպագծեւ արձանագրութիւններ» եւ հ. Ալիշանի «Շիրակ» գրքերի վրա: Աստախանան այժմ փոքրիկ, աննշան մի թրքաբնակ գիւղ է: Աստախանան Ալէքսանդրոպօլի հովտի նախադուռն է կազմում: Աստախանայի արեւելեան կողմը Արփաչայի նեղ հովտի ետեւից բարձրանում է վեհապանծ Արագածը (Ալագեօզը), արեւմուտքում Ախուրեանի հովիտը իւր անդնդախոր կիրճերով, իսկ հորիզոնի վրա Ալաշա լեռը: Մի քանի խօսքով արժանապատիւ հ. Ա. վ. Ղըլըճեանը նկարագրում է եւ Ղըփչաղ հայաբնակ գիւղը, որ գտնվում է Արագածի կուրծքի վրա: Արգիշտի թագաւորի նուանումների մէջ Աստախանան (Astuhini) անշուշտ նշանաւոր դեր է խաղացել: Ախուրեանի եւ Ալէքսանդրոպօլի հովիտների երկիրը՝ Etiuni երկիրը՝ նուանելու համար Աստախանան մեծապէս նպաստած է Արգիշտի թագաւորին:

Ապա խիստ նշանակալից է Պրօֆ. Գր. Խալաթեանի ուսումնասիրութիւնը «Հին Հայաստանի մի քանի աշխարհագրական անունների մասին», որ եւ ամբողջապէս թարգմանուած է «Բանասէր»ի 1900 թ. հատոր երկրորդ, պրակ Դ-ի մէջ:

Նիկոլսկու կարեւոր ուսումնասիրութիւնը, «Ասորական մագաղաթեայ աւետարաններ», խիստ հետաքրքրական է արեւելագէտ-ասորագէտների համար :

Մեծ տեղ են գրաւում Արեւելեան Յանձնաժողովի (Մոսկուայի Հրնագիտ. Ընկ.) նիստերի արձանագրութիւնները : Այդ նիստերը 1895-1900 թ. վերջը են կազմում : Հինգ տարուայ նստերի արձանագրութիւններ են սրանք, որոնց մէջ խիստ հետաքրքիր տեղեկութիւններ, նկատողութիւններ կան արեւելագիտութեան, հնագիտութեան եւ մասնաւորապէս հայագիտութեան եւ հայ հնագիտութեան համար : Հայերից Արեւելեան Ընկերութեան նիստերին գլխաւորապէս մասնակցել են՝ պ. պ. Գր. Խալաթեանց, Խ. Բիւշիւկ-Յովհաննիսեան եւ Լեւոն Մսերեան : Այդ յարգելի գիտնականների զեկուցումները խիստ կարեւոր են հայկ. պատմութեան եւ լեզուի համար :

Դարձեալ յիշենք հետեւեալ յօդուածները եւս .

Պրոֆ. Ֆր. Միւլլէրի Վրաց այբուբէնի ծագման մասին գրած ուսումնասիրութեան քննադատութիւնը, որ պատկանում է Պրոֆ. ԽախաՆովի գրչին :

Պրոֆ. Ֆր. Միւլլէրի մահուան յիշատակին նուիրած համակրական յօդուածը, որ պ. Լեւոն Մսերեանին է :

Գրքիս վերջում զետեղուած է Արեւելեան Յանձնաժողովի (Մոս. Հրնագիտ. Ընկեր.) տասնամեայ գործունէութեան Տեղեկագիրը, որ հետաքրքիր է Ընկերութեան համակրողների համար նրա կատարած արգասաւոր գործունէութեան տեսակէտից : Տեղեկագիրը կարդացուած է 31 Հոկտեմբերի 1897 թ. Ընկերութեան նստի մէջ, ծանկանում ենք ուղտական այդ արգասաբեր Արեւելեան Ընկերութեան յարատեւութիւն եւ աւելի մեծ առաջադիմութիւն :

Ամենից վերջին կցուած են վերոյիշեալ ասորական մագաղաթեայ աւետարանի 3 էջերի ընդօրինակութիւններ : Այդ մագաղաթեայ ձեռագիրները Է-Ը. դարերի յ. Գր. գործ են : Զեռագիրները պարունակում են զանազան հատուածներ չորս աւետարանիչներից :

Ա. ԵԴԻԳԱՐ .